ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՀԵԹՈՒՄ ՔՀՆ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ Բ.-Ե. ԴԴ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պատմական ուրվագիծ

Արարիչը մարդու համար սահմանել է ամուսնությունը, որը Աստծո խորհրդավոր, ձեռագործ ու բնական օրենքն է: Ասված Մովսեսին օրենքները տվեց Սինա լեռան վրա, իսկ ամուսնության օրենքն սկսվում է դրախտից:

Ամուսնության օրենքը բնական սերն է, որ մարդու բնությունից անբաժանելի է: Առանց ամուսնական պայմանի, որ միայն ազատ մարդուն է բնորոշ, բնական սերը հատուկ է նաև բոլոր թռչուններին ու անասուններին: Ու միայն բնական սերն է ողջ բնության կենսատու հոգին ու զորությունը: Պետք է ընդունել, որ ամուսնության օրենքն աշխարհի, մարդկության հիմքն է՝ բնության մեջ խորապես հաստատված. այն Աստծուց հետո մեր կյանքը շարունակող ստեղծագործ ձեռքն է, որովհետև մի անգամ արարելով ամուսիններին՝ բավական համարեց ու թողեց, որ այնուհետև ամուսնությունն արարչագործի, ու մարդիկ իրար ստեղծեն[1]:

Բ. դարի կեսից Եկեղեցու կյանքում կտրուկ փոփոխություն է տեղի ունենում. հեթանոս աշխարհը մի մեծ պայքար է սկսում Քրիստոսի եկեղեցու դեմ: Ջատագով հայրերի առջև խնդիր էր դրված՝ մաքուր պահել քրիստոնեական հավատքը հեթանոսների հարձակումներից[2]: Այս շրջանում շատ քիչ առիթ էր լինում խոսելու ամուսնության մասին: Եկեղեցու հայրերը պետք է քրիստոնյաներին պաշտպանեին հեթանոսների տարբեր մեղադրանքներից եւ կարգավորեին հարաբերությունները Հռոմեական կայսրության հետ՝ կոչելով արդարության[3]:

Բ. դարի վերջից սկսած Եկեղեցու հայրերի ստեղծագործություններում ամուսնության թեմային ավելի մեծ տեղ եւ ուշադրություն է հատկացվում: Նշանավոր ուսուցիչ Կղեմես Ալեքսանդրացին իր «Հաճախապատում» («Ստրոմատիս») աշխատության մեջ առաջին հակահարվածն է տալիս ամուսնության հարցի վերաբերյալ հերետիկոսական մոլորություններին:

1 Տես **Խրիմյան Հայրիկ**, Դրախտի Ընտանիք, Ս. Էջմիածին, 2011, էջ 38-39:
2 Տես **Եզնիկ ծ. վ. Պետրոսյան**, Հայրաբանություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 31:
3 Տես անդ, էջ 62:

Բ.-Գ. դդ. Եկեղեցու ծոցում գնոստիկյան շարժում է սկսվում: Գնոստիկները, հիմնվելով Ս. Գրքի վրա (Հոբ. ԺԵ. 3, Սաղմոս. Ծ. 5), իրենց դուալիստական մոտեցմամբ մերժում էին ամուսնությունը: Մարմնի մասին նրանք խոսում էին որպես մեղքի աղբյուր, որն ինչ որ ասպծո ստեղծածն է[4]: Իսկ որոշ հերետիկոսներ չէին ընդունում ո՛չ ամուսնությունը եւ ո՛չ էլ որդեծնությունը, որովհետեւ կարծում էին, որ կարիք չկա այս աշխարհում իրենցից հետո թողնել ուրիշ արարածներ, քանի որ բոլորը կարժանանան մահվան՝ որպես կերակուր: Կղեմես Ալեքսանդրացին, կամենալով հերքել այս հերետիկոսական մոլորությունները, իր «Ստրոմատիս» աշխատության երրորդ գրքում ցույց է տալիս ընտանիքի չափանիշը[5]:

Ըստ Կղեմեսի՝ տղամարդիկ չպետք է իրենց կանանց հետ վերաբերվեն որպես սիրուհիների: Եկեղեցու ուսուցիչը ցույց է տալիս, որ զգայական հաճույքները ամուսնական կյանքում գլխավոր նպատակը չեն[6], այլ գլխավոր նպատակը փոխադարձ սերն է, որը

4 Տե՛ս Stromata, lib. III, c. XVI, էջ 1200-1205, P.C.C. **Migne**, t. VIII:

5 Տե՛ս ''Строматы'' Климента Александрийскога, Ярославль, 1892, кн. II, գ. XXVI:

6 Այսօր հոգեբանությունը սահմանում է, որ մարդու բնական պահանջմունքներից է նաեւ սեռականությունը: Սա փաստ է, որի հետ պիտի հաշվի նստենք եւ որին պիտի փորձենք գնահատական տալ իբրեւ մարդ՝ բարոյական արարած՝ հիմնվելով նախ եւ առաջ քրիստոնեա-բարոյական արժեհամակարգի, բանականության եւ փորձառության վրա: Այսօր աշխարհում մարդու սեռականության հարցը թերեւս ամենաշատ արծարծվողներից է, ընդ որում արծարծվում է եւ կենսաբանների, եւ բժիշկների, եւ ընկերաբանների ու մարդաբանների, եւ հոգեւորականների ու աստվածաբանների կողմից: Մարդկային սեռականության մասին խոսելիս առաջին հերթին պատկերացնում ենք քաղքենիական ծագում ունեցող հաճույասպաշտության (հեդոնիզմ) խառնուրդ հանդիսացող մի իրավիճակ, որը կարելի է սահմանել իբրեւ բավարարվող, առանց ռիսկի, պատասխանատվության կամ ափսոսանքի սեռականություն, որն Արեւմուտքում մեծ տարածում գտավ վերջին 50-55 տարիների ընթացքում, երբ կատարվեցին մի շարք մշակութային-մարդաբանական փոփոխություններ, քարոզվեց սեռական կյանքի ազատականացում, սեռային պատկանելության ընտրողականության հնարավորություն եւ իրավահավասարության պայմաններում վարքագծի ազատություն (տե՛ս **П. В. Добросельский,** *Общие аспекты психики или введение в православную психологию*, Москва, 2008, էջ 150-171): Սա ուղղակի ֆրեյդյան գաղափարախոսության հետեւանքն էր, երբ մարդու մոտ նկատվող ցանկացած երեւույթ, արարք կամ դրսեւորում բացատրվում էր սեռականության իրողությամբ, երբ մարդը կայանում ու հասարականացվում էր սեռական բնազդի շնորհիվ. ոչ թե մարդն էր դրսեւորում իրեն իբրեւ սեռական էակ, այլ սեռականությունն էր պայմանավորում մարդուն իր ընկալումների ու դրսեւորումների ամբողջությամբ: Սա ուղղակի նշանակում է ընտանեկան հաստատության խարխլում, քանզի ընտանիքն այլեւս նկատվում էր որպես միջոց սեռական բնազդների ճնշման համար: Սա արդիական իրավիճակ է, որը հեղաշրջել է սեռականության մասին մինչ այդ ունեցած պատկերացումները՝ դրամագծորեն դարձրեր լույսի տակ դնելով նաեւ մարդկային փոխհարաբերությունները: Սեռն այսպիսով ամեն ինչ է, այն կառավարում է մարդու մոտ ամեն բան՝ ներառյալ գաղանդը, ձիրքը, մտավոր ներուժը եւ այլ: Մարդկային սեռականության հանդեպ առաջացրած նմանօրինակ անհանդեպ հետաքրքրությունը բնականաբար պիտի դրսեւորվեր նաեւ առօրյա կյանքում, որի դրսեւորումն են ամենատարբեր հակաբեղմնավորիչները: Անշուշտ, քրիստոնեությունը երբեւէ չի մերժում մարդկային սեռականությունը (**П. В. Добросельский**, *Супружеские отношения и грань греха,* Москва, 2009, с. 140-190): Սուրբ Գիրքը ներկայացնում է ընտանիքը եւ ուղղակի կամ անուղղակի ցույց տալիս, որ մարդկային վերարտադրության ընդունելի ճանապարհը ամուսնական-ընտանեկան հարաբերություններն են: Սա մի իրողություն է, որն ընդունված է քրիստոնեական ավանդական բոլոր Եկեղեցիների կողմից եւ կիրառվում է արդեն 19 դարից ավելի: Պատահական սեռական կապերը առողջ վերարտադրության երաշխիք չեն կարող դառնալ եւ ավելի շատ միտված են դեպի սեռական բավարարվածությանը, քան լուրջ հարաբերությունների մշակմանը: Մինչդեռ ամուսնական միությամբ մարդկային սեռականությունը լիովին ինքնադրսեւորվում է, եւ ամուսնական փոխլրացնող հարաբերությունների մեջ բացահայտվում է մարդկային էությունը՝ իբրեւ արարչության կատարելություն, իբրեւ Արարչին գործակից լինելու իրողություն: Քրիստոնեության համար այս մոտեցումները լիովին հարազատ են եւ չեն կարող մերժելի լինել: Ամուսնությունը Եկեղեցու համար զուտ ֆիզիկական-մարմնական միություն չէ, այլ նաեւ հոգեկան, հոգեբանական. քրիստոնեական խորհրդակատարության ժամանակ հստակ ասվում է, որ ամուսնանալիս դառնում են մեկ մարմին (տե՛ս **Епископ Иларион (Алфеев)**, *Вы-Свет Мира*, Москва, 2009, էջ 117-130): Երբ ազատ

պետք է առաջնորդի նրանց մինչեւ կյանքի վերջ[7]: Կղեմեսի պնդմամբ՝ միայն այն կինն իրավունք ունի ամուսնանալու, որ համապատասխանում է իրեն սիրող մարդու՝ առանց որեւէ պարտադրանքի եւ ճնշման[8]: Նրա կարծիքով ամուսնության կանոնական նպատակը զույգերի երեխաների ճիշտ դաստիարակությունն ու երջանկությունն է[9]: Կղեմես Ալեքսանդրացին ամուսինների մտահոգությունը երեխաների հարցում նմանեցնում է հողագործի մտահոգությանը: Հողագործը սերմը գցում է հողի մեջ, որպեսզի սերմը բերք տա: Ամենակարեւորն այն է, որ հողագործը ցանում է իր ցանկությամբ եւ Աստծո կամքով. «Աճեցե՛ք» (Ծնող. Ա. 28)[10]: Ըստ Կղեմեսի՝ ծնունդը «սուրբ» իրողություն է, քանզի պահպանում է աշխարհի գոյությունը[11]:

Կղեմեսը ցույց է տալիս, որ զույգերի միությունը պետք է նման լինի Քրիստոսի եւ Եկեղեցու միությանը՝ անխախտելի եւ անբաժանելի: Այս գաղափարը հանդիպում ենք նաեւ հեթանոսների առաքյալ Պողոսի նամակներում. «Ջանացե՛ք պահել հոգու միությունը խաղաղության կապով. մե՛կ մարմին եւ մե՛կ հոգի, ինչպես որ մե՛կ է ձեր հույսը, որին Աստված կոչեց մեզ» (Եփ. Գ. 4)[12]: Երկրորդ պսակն արդեն այն նշանակությունը չի ունենում, որովհետեւ կորցնում է առաջնային դերը: Երկրորդ անգամ ամուսնացող մարդը, Կղեմեսի պնդմամբ, կարող է այդ քայլը կատարել ըստ օրենքի, բայց այս պարագայում չի կարող հասնել Ավետարանի[13] կատարելությանը: Ս. Կղեմեսի պնդմամբ պսակի խորհրդի ժամանակ զույգերը պետք է Հաղորդություն ստանան, որպեսզի մաքրվեն աշխարհի ապականությունից: Եկեղեցու ուսուցիչը կամենում է ցույց տալ, որ ամուսնության մեջ մեղսալի բան չկա, քանզի այն զույգերը, որոնք ընդունում են Ս. Հաղորդությունը, դառնում են Աստծուն հաղորդակից. «Եղբայրնե՛ր, մարմին եւ արյուն Աստծո թագավորությունը ժառանգել չեն կարող. ոչ էլ ապականությունը անապականություն է ժառանգում» (Ա. Կորնթ. ԺԵ. 50)[14]: Պսակը խորհուրդ է, որը ճանապարհ է դեպի ճշմարիտ կյանք, դեպի մարդկության փրկություն[15]: Այս ամենից ելնելով՝ Կղեմես Ալեքսանդրացին նշում է, որ երեխաների ծնունդը չարից չէ, քանի որ ծնունդը եթե չարից լիներ, ապա Քրիստոս նույնպես չարից ծնված կլիներ, իսկ եթե այս ամենը չարից եղավ, ապա Քրիստոս չէր ծնվի Կույսից[16]:

ընկրությամբ կայանում է ամուսնական միությունը, եւ ամուսնացողների կյանքում իրականություն է դառնում փոխլրացման սկզբունքը սեռականության դրսեւորման ընթացքին, ամուսնա-ընտանեկան կյանքը կլանում է ամուսիններին ամբողջությամբ՝ եւ սիրտը, եւ մարմինը, եւ հոգին, եւ սրանցից որեւէ մեկի բացակայությունը այդ միությունը թերի է դարձնում (պատահական սիրային արկածների ժամանակ շարժիչ ուժ է միայն սեռական հակվածությունն ու մարմնական կիրքը, իսկ հոգեկան կամ հոգեբանական ապրումը, զգացումը կատարելապես բացակայում է): Լինել մի մարմին նշանակում է միավորվել ամբողջովին եւ մարմնական, եւ հոգեկան, եւ հոգեբանական առումներով:

7 Տե՛ս "Строматы" Климента Александрийскога, кн. II, гл. XXIII, էջ 301:

8 Տե՛ս անդ, էջ 297:

9 Տե՛ս **Архимандрит Николас Эмм. Аркас**, *Брак и деторождение,* Москва, 2008, էջ 18-19:

10 Տե՛ս "Педагог" Климента Александрийскога, Ярославль, 1890, кн. 2, гл. X:

11 Տե՛ս "Строматы" Климента Александрийскога, кн. III, гл. XII, էջ 370:

12 Անդ:

13 Տե՛ս անդ, էջ 366:

14 Stromat., lib. III, c. XVII, p. 1208.

15 Տե՛ս **J. Meyendorff**, *Marriage An Orthodox Perspective*, St. Vladimirs Seminary, New York, 1975, էջ 21-22:

16 Տե՛ս "Stromat.", lib. III, c. XVII, էջ 1205:

Հերետիկոսներին հիմնավոր պատասխան է տալիս նաեւ Կարթագենացի ուսուցիչ Տերտուղիանոսը: Նա իր գրվածքներում շատ է անդրադարձել ամուսնության թեմային՝ նշելով, որ առողջ ընտանիքը Քրիստոսի եկեղեցու հիմքն է[17]: Քրիստոս է Եկեղեցու միակ գլուխը, ինչպես Ադամն իր կնոջ՝ Եւայի, իսկ ով կհամարձակվի քանդել այս միությունը, մեղք կգործի (Ծնն. Բ. 24)[18]: Ապա նշում է, որ երկրորդ պսակը թույլատրելու պարագային չորրորդն էլ պետք է թույլատրել:

Զարգացնելով իր գաղափարն այս հարցի շուրջ՝ Տերտուղիանոսն ընկնում է ծայրահեղության մեջ: Հետագայում պնդում է, որ ամուսնությունը թույլատրելի է միայն «in necessitate» (անհրաժեշտությունից ելնելով)[19], քանի որ pessimo melius է (լավը վատերի միջից): Հիմք ունենալով Պողոս առաքյալի խոսքը (Ա. Կորնթ. Է. 1)՝ Տերտուղիանոսը կնոջը համարում է չարի գոյություն եւ ավելացնում, թե ով ամուսնացած չէ՝ թող չամուսնանա[20]: Հետագայում փոխելով իր տեսակետը ամուսնության վերաբերյալ՝ նա նշում է, որ ամուսնությունը խորհրդավոր իրողություն է, եւ Եկեղեցու օրհնությունը չսպացած զույգերի պսակն անվավեր է համարվում [21]:

Ամուսնական միության առաջին պայմանը տեսնում ենք Ս. Իգնատիոս Ասպվածազգյացի երկերում: Նա խորհուրդ է տալիս քրիստոնյա կանանց, որ իրենց ամուսիններին սիրեն ողջ հոգով եւ մարմնով, ինչպես Ասպված սիրեց Եկեղեցին: Ս. Իգնատիոսը նշում է. «Ովքեր ցանկանում են ամուսնանալ, պետք է եպիսկոպոսի թույլտվությամբ ամուսնանան, որպեսզի միությունն Ասպծով կատարվի եւ ոչ թե մարմնով»: Ս. Իգնատիոսի խոսքում նշված է, ոչ թե մարմնով («μή καί επιθυμίαν»[22] արտահայտությունը նշանակում է, որ ամուսնությունը չպետք է հիմնված լինի զուտ ցանկասիրական նպատակների), այլ մաքուր սիրո վրա: Իհարկե, Ս. Իգնատիոսը չի մերժում ամուսնության մեջ առկա մարմնական կողմը, բայց նշում է, որ այն պետք է ծառայի միայն բարձր նպատակի՝ որդեծնության համար[23]: Այսպիսով, ամուսնության՝ քրիստոնեական ուսմունքը միանշանակ տարբերվում է հեթանոս աշխարհի պատկերացումից՝ հիմքում ունենալով սերն ու փոխադարձ հարգանքը. ամուսնական միությունը Եկեղեցում պետք է իր լրմանը հասներ հոգեւորականի ներկայությամբ: Եպիսկոպոսի թույլտվությունն ու օրհնությունը, անկասկած, ցույց են տալիս հոգեւոր օրհնության անհրաժեշտությունը[24]:

Ամուսնությունը հաստատել է Ասպված, որ ի սկզբանե ստեղծեց տղամարդուն եւ կնոջը, օրհնեց նրանց (հմմտ. Ծնն. Ա. 28): «Առաքելական» կանոններում հստակ նշվում

17 Տե՛ս **Migne**, *Patrol. Curs. Compl., Ser. Latina, t. I, Ad uxorem, lib.* II, c. IX, էջ 1302:

18 Տե՛ս **Migne**, *P. C. C., Unum matrimonium novimus, sicut unum Deum. De mongamia,* t. II, c. IV, էջ 934:

19 Տե՛ս **Geoffrey D. Dunn**, *Tertullian,* New York, 2004, էջ 37-38:

20 Տե՛ս անդ:

21 Տե՛ս "Ad uxorem", lib. II, c. IX, էջ 1302:

22 Տե՛ս Epistol. ad. Polyc., V, էջ 160. Opera partum apostolic. Edit. Franc, vol. II. Tubingae. MDCCCLXXXI. **II. прот. Преображенского** *"Писания мужей апостольских"*, СПБ., 1895, էջ 310. հմմտ. **P. Th. Camelot, O. P.**, *Ignace D' Antioche Polycarpe de Smyrne*, Paris, 1958, էջ 67-142:

23 Տե՛ս **П. прот. Преображенского** *«Писания мужей апостольских»*, էջ 310:

24 Այս մասին տե՛ս "Das Recht der Eheschliessung in seiner geschichtlichen Entwicklung von **Emil Friedberg**", Leipzig, 1865, էջ 7. **Wilhelm Dieckhoff**, *Die kirchliche Trauung, ihre Geschicte im Zusammenhange mit der Entwicklung des Eheschliessungs-rechts und ihr Verhaltniss zur Civilehe.*, Rostock, 1878, էջ 20, 26:

է, որ տղամարդու եւ կնոջ միությունը Արարչի մտքի համաձայն է կատարվել[25], իսկ ովքեր ամուսնալուծվում են, պետք է դուրս գան Եկեղեցուց[26]: Ամուսնության գլխավոր նպատակը որդեծնությունը չէ, քանզի ամուսնական կյանքում որդեծնությունից զատ կարեւորվում է զույգերի հոգեւոր հարաբերությունը եւ փոխադարձ սերը: Սուրբգրային բազմաթիվ հատվածներ նկարագրում են, թե ինչպիսին պետք է լինեն զույգերի հարաբերությունները (Ա. Պետր. Գ. 1, 6, Առակ. Ե. 18-19, Մաղ. Բ. 14):

Մեր ուսումնասիրության համար շատ կարեւոր է, թե Եկեղեցու հայրերն ինչ դիրքորոշում են ունեցել «երկրորդ պսակի» վերաբերյալ: Ըստ քրիստոնեական վարդապետության՝ երկրորդ պսակն իր դրական բոլոր կողմերով չի կարող հավասարազոր լինել առաջինին. «Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ԺԹ. 6): Աստվածաշնչյան վերոնշյալ տողերի համաձայն՝ գայթակղության մեղքը քակտում է զույգերի միությունը, հնարավորություն տալիս «անմեղ» տղամարդուն կամ կնոջը կրկին ամուսնանալ եւ գայթակղության առիթ դառնալ մյուսների համար:

Բ. դարի եկեղեցական ուսուցիչ Աթենագորասը փորձում էր ապացուցել, որ ամուսնության գլխավոր եւ բարի նպատակը երեխաներ լույս աշխարհ բերելն է[27]: Բայց այս գաղափարը քրիստոնեական ընկալմամբ երկրորդական է, քանի որ ամուսնության գլխավոր նպատակը զույգերի հոգեւոր ամուր միությունն է, քանզի ամուսնությունն ամենասերտ կապն է, ուխտը, որ կարող են առհասարակ երկու մարդ ունենալ իրար հետ: Ոչ ազգականությունը եւ ոչ էլ բարեկամությունը չեն կարող երբեք այդ աստիճանի մտերմություն ներշնչել մի դաշնության կամ ուխտի մեջ: Այնպես որ, ամուսնության մեջ մարմնականը չպետք է նպատակ լինի, այլ՝ հոգեւորը, սիրո իրականացումը, ինչպես որ առաքյալն է ասում. «Նրանք, որ կին ունեն, այնպես ապրեն, որպես թե՝ ունեցած չլինեին» (Ա. Կորնթ. Է. 29): Ընդհանրապես որդեծնությունը փրկության միջոց է դառնում միայն այն ժամանակ, երբ այն ուղեկցվում է հավատով, սիրով եւ սրբությամբ (Ա. Տիմ. Բ. 15): Աթենագորասն անընդունելի է համարում երկրորդ ամուսնությունը: Նա նույնիսկ արգելում է ամուսնանալ զույգերից մեկի մահվան դեպքում՝ դա համարելով հոգեւոր խզում նախկին կողակցի հետ. «Պետք է մնալ այնպիսին, ինչպիսին ծնվել ես, եւ ամուսնանալ մեկ անգամ, որովհետեւ երկրորդ ամուսնությունը Աստծուն հակառակ քայլ է... Ով հրաժարվում է առաջին ամուսնությունից, համարվում է Աստծո արարչության արգելք, որովհետեւ ի սկզբանե ստեղծեց մեկ տղամարդու եւ մեկ կնոջ, եւ ով քանդում է այս հոգեւոր ու մարմնական կապը, նա աստվածմերժողություն է անում»[28]: Եթե Աթենագորասի այս բոլոր մտածումները ամենայն խստությամբ եւ փառացիորեն ընդունենք, ապա հակառակ է Պողոս առաքյալի խոսքերին. «Կինը կապված է իր մարդուն մինչեւ այնքան ժամանակ, որ իր մարդը կենդանի է: Իսկ երբ նրա մարդը մեռնի, ազատ է ամուսնանալու՝ ում հետ ուզենա, բայց միայն Տիրոջով» (Ա. Կորնթ. Է. 39)[29]:

25 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հր. Ա., աշխատ.՝ Վազգեն Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 47-49:
26 Տե՛ս անդ, էջ 432-434:
27 Տե՛ս "Апология 1", гл. XXIX. "Послание к Диогнету", Москва, 1867, էջ 17:
28 Անդ:
29 **А. Завьялова**, *К вопросу о браке и брачном разводе.* "Странник", 1896, т. III, с. 50.

Եկեղեցական նշանավոր հայր Թեոփիլոս Անտիոքացին նշում է, որ աստվածային միության խորհուրդը ցույց տալու համար Արարիչը միասին ստեղծեց տղամարդուն եւ կնոջը[30], որպեսզի նրանց միջեւ մեծ սեր լինի[31]:

Ըստ Որոգինեսի՝ եթե երկու մարմիններ միանալով մեկ են դարձել, ապա այդ հարաբերության մեջ գոյություն ունի համաձայնություն եւ ներդաշնակություն: Այս ամենից զատ զույգերին հարկավոր կլինի եւս մի բան, որը նրանց անբաժանելի կդարձնի՝ դա մեկ հոգի ունենալն է (ἐν πνεύμα). «Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին...» (Եփ. Ե. 25)[32]: Որոգինեսն ընդգծում է, որ կանայք Քրիստոսի մարմնի՝ Եկեղեցու անդամներն են, ապա նշում է, թե զույգերի սերը մարմնական եւ հոգեւոր միությունն է: Սերը, ըստ Որոգինեսի, ամուսնական միության հիմքն է: Եկեղեցու ուսուցիչը, տղամարդու եւ կնոջ հարաբերությունը նմանեցնելով Քրիստոսի եւ Եկեղեցու հարաբերությանը, ավելի քիչ հարգանքով է վերաբերվում երկրորդ ամուսնությանը: Մեկ Քրիստոս՝ Փեսացու եւ մեկ հարս՝ Եկեղեցի[33]: Այս ամենից զատ նա չի մերժում երկրորդ ամուսնությունը եւ մոլորություն է համարում այն կարծիքը, թե երկրորդ անգամ ամուսնացողները փրկության չեն արժանանա: Որոգինեսը պնդում է, որ երկրորդ անգամ ամուսնացողները կարող են փրկության արժանանալ, բայց որոշ սահմանափակումներով նրանք ավելի ցածր պիտի կանգնեն կույսերից, պսակի ճանապարհը մեկ եւ վերջին անգամ ընտրողներից: Ինչպես երկրային Եկեղեցում, այնպես եւ Աստծո արքայությունում ովքեր կընտրեն կուսական կյանքը, առավել մոտ կլինեն փրկությանը: Ամուսնալուծության հարցին Որոգինեսը մեծ զգուշությամբ է մոտենում: Նրա կարծիքով՝ Հին Կտակարանում ամուսնալուծությունը թույլատրելի էր հրեական ժողովրդին՝ խստասրտության եւ թուլության պատճառով[34]: Հիսուս Քրիստոս վերականգնեց ամուսնության նախնական օրենքը եւ արգելեց ամուսնալուծությունը: Ընդհանրապես ուսումնասիրելով Որոգինեսի երկերը՝ տեսնում ենք, որ նա վերջնական պատասխան չի տալիս ամուսնալուծության հարցին, բայց այն համարում է հակառակություն Աստծուն եւ Սուրբ Գրքին[35]:

Երկու տարբեր սեռեր միավորվում են մի կյանքի եւ մի մարմնի մեջ՝ սիրո շնորհիվ, որն ավելի է ամրապնդվում, երբ ստանում են Եկեղեցու օրհնությունը: Քրիստոնեական ընտանիքը, Ս. Բասեղ Կեսարացու պնդմամբ, պետք է լինի բարության դպրոց[36]: Եթե

30 Տե՛ս "Апология 2", гл. XXVIII. "Три книги к Автолику о вере христианской", էջ 18-21:

31 Ս. Գրքից տեղեկանում ենք, որ Աստված տղամարդ եւ կին ստեղծեց (Ծնն. Ա.): Ըստ Սուրբ Գրքի՝ Եւան Ադամի մեջ էր, այսինքն՝ ոսկրի մեջ, որից Աստված ստեղծեց նրան: Չնայած Եւան Ադամի մեջ առանց մարքի էր, բայց մարմնով, հոգով եւ շնչով էր: Աստված ոչինչ չավելացրեց ոսկրին, բացի գեղեցկությունից եւ արտաքին տեսքից, քանզի ոսկրի մեջ ամփոփված էր ամեն բան, որպեսզի ձեւավորվեր Եւան, եւ ճշմարիտ է ասված. «Տղամարդ եւ կին արարեց նրանց» (Ծնն. Ա. 27). տե՛ս **К. К. Гаврилкина**, *Библейские комментарии отцов Церкви и других авторов I-VIII веков. Ветхий Завет, т. I: Книга Бытия 1-11,* Тверь, 2004, էջ 46:

32 Տե՛ս **Migne**, *Commentar in Matth. Patrol. Curs. Compl. Ser. Gr.*, t. XIV, էջ 1228-1229:

33 Տե՛ս "In Cantic. Cantic. Homil, in Ierem". XIX, nr. 4, P. C. C. Ser. Gr., t. XIII, էջ 509:

34 Տե՛ս "Commentar. In Matth.", ¿ջ 16 »õ 18. 1227-1233, Cp. In. Numer. Horn. XVI, էջ 4:

35 Տե՛ս **М. Григоревский**, *Учение святителя Иоанна Златоуста О Браке*, Москва, 2007, էջ 61-62 (ներածություն):

36 Մարդու արարումը միաժամանակ արարումն էր ընտանիքի՝ որպես մարդու կենսաձեւի: Ամուսնությունը երկու անձանց միաձուլումն է՝ որպես մի անբաժանելի մարմին: Այդ միությունը տեղափոխվելով քրիստոնեական սիրո հարթություն՝ հաստատվում է մի նոր երանգով. «Մարդի՛կ պարտավոր են սիրել իրենց կանանց իբրեւ

Որոգինեսի մոտ վճռական պատասխան չտեսանք երկրորդ պսակի վերաբերյալ, ապա Ս. Բարսեղը երկրորդ պսակը համարում է սատանայի որոգայթ եւ քրիստոնյային անհարիր. երկրորդ անգամ ամուսնացողը պետք է մեկ տարով զրկվի Ս. Հաղորդությունից[37]: Ըստ Ս. Բարսեղ Կեսարացու՝ ամուսնական միության մեջ կինը եւ տղամարդը պետք է ունենան հավասար իրավունքներ. «Մեկ բարեգործ տղամարդու եւ կնոջ, ինչպես որ արարչությունը երկուսին հավասար է տրված», ինչպես Սուրբ Գրքում է նշված. «Եւ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց» (Ծնող. Ա. 27)[38]:

Ս. Բարսեղ Կեսարացու մանկության ընկեր Գրիգոր Աստվածաբանն իր երկերում ավելի քիչ ուշադրություն եւ կարեւորություն է տալիս ամուսնությանը: Ըստ Ս. Գրիգոր Աստվածաբանի՝ ամուսնական հարաբերության նախատիպը Քրիստոսի եւ Եկեղեցու միությունն է (Եփ. Ե. 32)[39]: Եկեղեցական նշանավոր հայրը պնդում է, որ Աստված չի ընդունում երկրորդ պսակը. Քրիստոս՝ Եկեղեցու գլուխը մեկ է[40], ուստի ամուսնությունը եւս պետք է միակը լինի: Նա նշում է, որ առաջին ամուսնությունն օրենքն է, երկրորդը՝ անկումը, իսկ երրորդն անօրինական վիճակն է: Ս. Գրիգոր Աստվածաբանն ընդգծում է, որ ամուսնությունն իր իդեալական նշանակությամբ բարի գործ է, եւ մարդը, որ ամուսնական կյանքի մեջ է մտնում, երբեք չի կորցնում մաքրությունը եւ անմեղությունը, քանզի Հիսուս Քրիստոս Իր ներկայությամբ Կանա քաղաքում օրհնեց ամուսնությունը[41]:

Արեւմտյան Եկեղեցու նշանավոր հայր Ս. Ամբրոսիոս Մեդիոլանեցին նշում է՝ ով առանց կնոջ է ապրում, նա տնանկ է համարվում: Որպեսզի ամուսնական միությունը կատարյալ լինի, անհրաժեշտ է կյանքի ընկերոջ մեջ գտնել հոգեւոր արժեքներ[42]: Ս. Ամբրոսիոսի կարծիքով ամուսնությունը կարելի է անվանել բարություն, քանի որ այս բնական ճանապարհի միջոցով տեղի է ունենում մարդկային ցեղի ծնունդը: Ամուսնական համաձայնությունը (pactio coniugalis), ըստ Ս. Ամբրոսիոսի, արտահայտվում է նշանադրութ-

---

իրենց մարմինները. ով սիրում է իր կնոջը, ինքն իրեն է սիրում» (Եփ. Ե. 28): Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով ու նմանությամբ, իսկ քանի որ «Աստված սեր է», այդ պատկերի գլխավոր բաղադրամասերից մեկը սերն է լինելու: Ուստի, Աստված չէր կարող մտադրություն ունենալ ստեղծելու մի էակ, որը զուրկ լինի սիրո առարկայից: Սերը ենթադրում է երկու էակի միացում: Աստծուն սիրել նշանակում միանալ Տիրոջը, փոխադարձ ներթափանցում՝ մարդն ի Քրիստոս եւ Տերը մարդու մեջ: Նույնն է նշանակում նաեւ ամուսինների սերը՝ ի մեկ մարմին: Այստեղից է «Քրիստոս-Եկեղեցի» եւ «Փեսա-հարս» զուգահեռի ի հայտ գալը: Եկեղեցին (հարսը)՝ հավատացյալների հավաքականությունն է, Քրիստոս՝ գլուխն է Եկեղեցու (Եփ. Ե. 23), եւ այս աստիճանակարգությունը, որ կառուցվածքային ամրության գրավականն է, հաստատվեց Եդեմում՝ ընտանիքի մակարդակով: Ամուսնական կապի անքակտելիությունն ապահովելու համար էր, որ Աստված հաստատեց աստիճանակարգությունն ընտանիքում, նախ՝ կնոջը որակեց որպես «օգնական», ապա՝ ավելի հստակեցրեց՝ իր ամուսնուն մեղքի մեջ գցող Եւային ասելով. «Քո ամուսնուն պիտի ենթարկվես, եւ նա պիտի իշխի քեզ վրա» (Ծնող. Գ. 16). տե՛ս **Ռ. Պապայան**, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Ս. Էջմիածին, 2002, էջ 150-151:

37 Տե՛ս "Правила св. Василия Великого. Первое каноническое послание к Амфилохию, епископу Иконийскому", прав. 4, Москва, 1884. տե՛ս "Опыт курса церковного законоведения" архим. Иоанна, выпуск 2, СПб., 1851, Толк. на 4-е правило, էջ 21:

38 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», էջ 337-338:

39 Տե՛ս "Творение Григория Богослова", т. V, Москва, 1847, էջ 219:

40 Տե՛ս նշվ. աշխ., т. I., էջ 280:

41 Տե՛ս նշվ. աշխ., т. I, էջ XXXVII:

42 Տե՛ս **Migne**, De Paradiso, Lib. unus, c. X, nr. 48, t. XIV, էջ 298:

յան կարգի ժամանակ եւ համազոր է ամուսնությանը[43]: Նշանադրության կարգից հետո օրիորդը համարվում է փղամարդու կինը[44]:

Նշանված Մարիամը Սուրբ Գրքում հիշատակվում է որպես Հովսեփի կին (Մտթ. Ա. 24): Ս. Ամբրոսիոսն արգելում է անհավատների հետ ամուսնությունը, որովհետեւ կրոնական անհամաձայնության դեպքում զույգերի ներքին կյանքում ամեն ինչ չի կարող հարթ ընթանալ, ապա ավելացնում, որ ոչ միայն սերը պետք է ընդհանուր լինի, այլ նաեւ հավատքը: Եկեղեցական հայրն աներկբա մերժում է երկրորդ ամուսնությունը եւ ամուսնալուծվելու համար միայն մեկ պատճառ է ընդունում՝ զայթակղությունը[45]: Ս. Ամբրոսիոսը նույնպես կուսությունը վեր է դասում ամուսնությունից: Այս գաղափարը զարգացնում է Արեւմտյան Եկեղեցու մյուս նշանավոր հայր Հերոնիմոս Երանելին[46]: Ըստ նրա՝ ամուսնությունը փառաբանվում է, քանզի այս միությունից ծնվում են կույսերը, ինչպես սերմերից ծաղկում են վարդերը[47]: Հերոնիմոս Երանելին ամուսնությունը համարում է մեղսագործության հետեւանք (Ծնն. Ա. 28). դրախտում Եւան կույս է եղել եւ մաշկեղեն հագուստը կրելուց հետո է միայն սկսվել նրա եւ Ադամի ամուսնական վիճակը[48]:

Հերոնիմոս Երանելին կարծում է, որ ամուսնությունն արգելում է քրիստոնյային հասնել Աստծուն: Նա երկրորդ պսակը արգելում է անհամբերողներին, իսկ երրորդի դեպքում խորհուրդ է տալիս կնոջը կապել փղամարդուն եւ ոչ թե սատանային[49]: Վերջում ավելացնում է, որ Հիսուս Քրիստոս մարմնով Կույս էր, իսկ հոգով՝ Եկեղեցու միակ Փեսան[50]:

Այսպիսով ո՛չ Աստված, ո՛չ Հիսուս, ո՛չ Պողոսը եւ ո՛չ Եկեղեցին բացարձակ հրահանգ չեն տալիս, որ անժխտելի օրենքով, առանց բացառության մարդիկ պետք է ամուսնանան կամ կուսական կյանք վարեն՝ առանց երբեւէ ամուսնանալու: Շատ ամուսնացածներ եւս առաքինացան, բայց Ավետարանի խաչակիրների խմբի գերազանցությունը միշտ անհամեմատ է: Ուրեմն ստույգ է, եւ պետք է խոստովանենք, որ ամուսնության կամ կուսության ընտրությունը մարդու ազատ կամքին է թողնված. ամեն մարդ իր առանձին շնորհն ունի, որովհետեւ Եկեղեցու դրախտը մշակող Հայրը զանազան ծաղիկներ է տնկել, ու յուրաքանչյուրն իր վայելուչ տեսքն ու բույրն ունի:

---

43 Տե՛ս **Migne**, De institutione virginitatis, Lib. un., cap. VI, t. XVI, էջ 316:

44 Նշանադրության մատանին ցույց է տալիս հարսի եւ փեսայի ամբողջական կատարյալ սերը: Ինչպես մատանին է մի մատին դրվում, նույնպես հարսը մեկ փեսայինն է, եւ փեսան՝ մեկ հարսինը: Մատանու խորհուրդը վերաբերում է նաեւ հավատքին. ինչպես մատանին է դրվում հինգ մատներից մեկին, հավատն էլ դրվում է մեր իմացման վրա, որը մեկն է ներքին հինգ զգայարաններից: Մատանին դրվում է սրտի երակ ունեցող մատին, որը նշանակում է՝ մեր հավատքն առ Քրիստոս սրտի ջերմ սիրով պետք է հաստատված լինի, իսկ պսակը, որ դրվում է զույգերի գլխին, խորհրդանշում է կրքերի նկատմամբ հաղթանակը. տե՛ս **Ա. phն. Մակարյան**, Քրիստոնեության իսկությունը, Ս. Էջմիածին, 2011, էջ 267. **Епископ Иларион (Алфеев)**, *Вы-Свет Мира*, էջ 120-121. **J. Meyendorff**, *Marriage An Orthodox Perspective*, էջ 24:

45 Տե՛ս **Migne**, De Abraham, Lib. un., c. IX, nr. 84-85, t. XIV, էջ 451:

46 Տե՛ս "Творение блж. Иеронима Стридонского", ч. I, Киев, 1879, էջ XIX:

47 Տե՛ս նշվ. աշխ., էջ 118:

48 Տե՛ս "Две книги против Иовиана", ч. IV, Киев, 1880, էջ 156:

49 Տե՛ս ''Творение блж. Иеронима Стридонского'', ч. III, էջ 233:

50 Տե՛ս նշվ. աշխ., ч. IV, էջ 155: